

Հավելված  
Բերքանուշ համայնքի ավագանու  
2018թ. մարտի 15-ի № 13-Ն որոշում

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2018 թվականի

## ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Համայնքի ղեկավար՝

Մ.Գ. Հայրապետյան

Բերքանուշ 2018 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ .....	4
2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .....	5
3. ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԾԱԽՍՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....	6
4. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐ .....	7
5. ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ .....	8
6. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ .....	8

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Բերքանուշ համայնքի ՏԱՊ-ը մշակվել է համայնքի ՏԻՄ-երի 2018թ. անելիքները համակարգելու նպատակով: Մասնավորապես, համայնքի ՏԱՊ-ի հիմնական նպատակներն են.

- սահմանել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- Բարձրացնել ՏԻ-ը բնակիչների ներգրավվածությունը՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակը,
- Ապահովել համայնքի ջրային ռեսուրսների նպատակային և արդյունավետ կառավարումն ու օգտագործումը
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Համայնքի 2018թ. զարգացման հիմնական ուղղությունները ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2018 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
Բերքանուշ համայնքում ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայությունների որակից, %	90	95
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի կազմում, %	29	32
<b>Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը			
	Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, %	90	95
<b>Ոլորտ 3. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
Ապահովել համայնքում մշակութային ծառայությունների մատուցումը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը բնակիչներին, %	70	75
<b>Ոլորտ 4. Սոցիալական պաշտպանություն</b>			
Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին, բարելավել նրանց սոցիալական վիճակը			
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	80	90
<b>Ոլորտ 5. Գյուղատնտեսություն</b>			
Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը, աջակցել ներդրումային ծրագրերի իրականացմանը	Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ, %	40	60
<b>Ոլորտ 6. Շրջակա միջավայրի պահպանություն</b>			

Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը, ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ	Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացող ամբողջ աղբի քանակի մեջ, %	60	70
	Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը սանիտարական մաքրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	30	45
<b>Ոլորտ 7. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն</b>			
Ապահովել ՏԻՄ գործունեության մասին տեղեկատվության հասանելիությունը համայնքի բնակիչներին, ներգրավել նրանց համայնքային որոշումների կայացման գործում	Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, %	3	5

## 2. ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԾԱԽՍՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	ՏԵՍԱԿԱՐԱ Ր ԿՇԻՌԸ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	64611,4	100
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	30360,0	47,0
2.	Պաշտպանություն	0,0	0,0
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0,0	0,0
4.	Տնտեսական հարաբերություններ	15090,4	23,4
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	1010,0	1,6
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	2100,0	3,3
7.	Առողջապահություն	100,0	0,2
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	5476,0	8,5
9.	Կրթություն	3950,0	6,1
10.	Սոցիալական պաշտպանություն	3520,0	5,4
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	3005,0	4,7

### 3. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐ

<b>Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքում արդյունավետ տեղական ինքնակառավարում:	20475
Տեղեկատվական ծրագրերի, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հանրային ծառայությունների ձեռք բերում:	2000
Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության մակարդակի բարձրացում:	560
<b>Բաժին 4. Տնտեսական հարաբերություններ</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրում համայնքի ներդրում:	1574.6
<b>Բաժին 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքը դարձնել մաքուր և հրապուրիչ շրջակա միջավայրով բնակավայր, արդյունավետ աղբահանության ծրագրերի իրականացում	810
Հակակարկոտային կայանների անխափան աշխատանքի ապահովում	200
<b>Բաժին 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Գիշերային լուսավորության համակարգի սպասարկում և պահպանում	1900
Համայնքի ցայտաղբյուրների և ջրավազանների ջրամատակարարման ապահովում	200
<b>Բաժին 7. Առողջապահություն</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Աջակցություն համայնքի առաջնային բուժօգնության ծառայությանը	100
<b>Բաժին 8. Հանգիստ, մշակույթ և կրոն</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքի բնակիչների համար որակյալ մշակութային ծառայություններից օգտվելու հնարավորությունների ստեղծում	5476
<b>Բաժին 9. Կրթություն</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության գործունեության ապահովում, պայմանների բարելավում	3600
Աջակցություն համայնքի կրթական այլ հաստատություններին	350
<b>Ոլորտ 10. Սոցիալական պաշտպանություն</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքի բնակչության որոշակի խավերին ժամանակավոր անաշխատունակության, վատառողջության դեպքերում ֆինանսական աջակցության տրամադրում:	3520

<b>Բաժին 11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցների հաշվին իրականացվող ծրագրեր, մասնավորապես «Զրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրում համայնքի կողմից ներդրում:	3005

#### **4. ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

<b>Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային պայմանների բարելավում	2100
Գերեզմանների պարսպապատում	5225
<b>Բաժին 4. Տնտեսական հարաբերություններ</b>	
<b>Ծրագիր</b>	<b>Գումար</b>
Համայնքային փողոցների կովճապատում	1450
Գազամատակարարման համակարգի կառուցում	12065.8

#### **5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԸ**

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները՝ ապահովելով բարեկեցիկ ապրելակերպ, համայնքը դարձնել բարեկարգ բնակավայր: